ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻ
ՀԱՂԹԱՆԱԿԻ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

ԳՈՀԱՐ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ֆաշիստական Գերմանիայի դեմ Խորհրդային Միության մղած պատերազմը խորհրդային ժողովուրդների ու Երկրորդ համաշխարհային պատերազմի պատմության մեջ բացառիկ տեղ է գրավում: Պատերազմն իր մասշտաբներով, մարդկային ուժերի և նյութական միջոցների ահռելի կորուստներով Խորհրդային Միության պատմության ամենածանր և ամենամռայլ ժամանակաշրջանն էր: Թշնամու դեմ հաղթանակը ձեռք բերվեց ուժերի գերազույն լարումով, մեծագույն զրկանքների, ժողովուրդների անօրինակ սխրանքների ու հերոսության գնով:

Հայրենական մեծ պատերազմի պատմության վերաբերյալ վերջին տարիներին ստեղծվել է հսկայածավալ գրականություն: Տարեցտարի երևան են գալիս գաղտնազերծված պաշտոնական փաստաթղթերի ու նյութերի նոր ժողովածուներ, տպագրվում են գիտական ուսումնասիրություններ, քաղաքական, պետական ու ռազմական գործիչների հուշեր, որոնք նոր լույս են սփռում Հայրենական մեծ պատերազմի պատմության հարցերի վրա:

Հետխորհրդային ռուս պատմաբաններից շատերը փորձում են ձերբազատվել խորհրդային պաշտոնական պատմագրության՝ Հայրենական մեծ պատերազմի պատմության վերաբերյալ արմատացած գաղափարական կապանքներից. նրանք ջանում են ներկայացնել այն ճշմարտացի, առանց ավելորդ գունազարդումների: Պետք է նշել, որ այս բնագավառում առաջընթացն ակնհայտ է: Այժմ վերանայվել են նախապատերազմյան տարիների ԽՍՀՄ-ի արտաքին քաղաքականության հիմնահարցերը, մասնավորապես նոր մոտեցում է ցուցաբերվում 1939 թ. օգոստոսի 23-ին Գերմանիայի հետ կնքված չհարձակման պայմանագրի և դրան կից գաղտնի, նախկինում անհայտ արձանագրության վերաբերյալ: Վերջինս գիտվում է ԽՍՀՄ-ի և Գերմանիայի միջև Արևելյան Եվրոպան ազդեցության դոտիների բաժանելու պայմանագիր, իսկ 1939–1940 թթ. խորհրդային սահմանների ընդլայնումը՝ բռնակցում: Քիչ չեն նաև այս տեսակետը վիճարկողները: Վեր են հանվել պատերազմի առաջին փուլում Կարմիր բանակի

կրած ծանր պարտության, թշնամու կողմից հսկայական տարածքների գրավման, ինչպես նաև միլիոնավոր մարդկանց զոհվելու պատճառները[1]:

Հայրենական մեծ պատերազմի պատմության մասնագետները վճռական նշանակություն ունեցած ճակատամարտերի հետ ուսումնասիրել են քիչ հայտնի և անհաջող ելք ունեցած ու հսկայական կորուստներ պատճառած և նպատակին չծառայած մարտերի պատմությունը: Արժանին է հատուցվում հակառակորդի հրամանատարության առանձին դեպքերում դրսևորած արհեստավարժությանը, նրանց՝ իրադրության փոփոխությանն արագ արձագանքելու, օպերատիվ գործաշարժեր կատարելու, սրընթաց հարձակումներ գործելու ունակությանը: Ասվածից հետևում է, որ եթե Կարմիր բանակին վերջին հաշվով հաջողվեց հաղթել այսպիսի հզոր թշնամու, ապա դա նրա ռազմական արվեստի առավել բարձր մակարդակով էր պայմանավորված: Ժամանակակից հեղինակները չեն անտեսում նաև հակահիտլերյան դաշինքի մեջ ընդգրկված երկրների՝ Խորհրդային Միությանը ցույց տված էական օգնությունը լենդ-լիզի շրջանակներում[2]:

ԽՍՀՄ-ի դեմ պատերազմին նախապատրաստվելիս գերմանական հրամանատարությունը կազմեց պատերազմի պլան, որը մշակման տարբեր փուլեր անցնելուց հետո հաստատվեց ու ստացավ «Բարբարոսա տարբերակ» պայմանական անվանումը: Այդ պլանի համաձայն գերմանական ուժերը երեք հիմնական՝ հյուսիսային, կենտրոնական և հարավային ուղղություններով սրընթաց հարձակվելու էին Կարմիր բանակի զորամասերի վրա և ԽՍՀՄ-ի արևմտյան շրջաններում շրջապատելու ու ոչնչացնելու էին դրանք: Արհեստավարժորեն ու մանրակրկիտ մշակված այս պլանի հիմնական թերությունն այն էր, որ թշնամին գլխավոր ուշադրությունը դարձնում էր պատերազմը կայծակնային եղանակով վարելուն, թերագնահատում էր ԽՍՀՄ զինված ուժերի մարտունակությունը և պատերազմը ձգձգվելու ու տևական դառնալու հնարավորությունը[3]:

Ֆաշիստական Գերմանիայի ու նրա դաշնակիցների ուժերը կենտրոնացել էին Բարենցի ծովից մինչև Սև ծով, որտեղ Գերմանիան ուներ 129 դիվիզիա, իսկ դաշնակիցները՝ 37: ԽՍՀՄ-ը թշնամու դեմ հանել էր 2,7 մլն մարդ, որոնք նրա զինված ուժերի կեսից ավելին էին: Կարմիր բանակն ուներ 170 դիվիզիա[4]: Նրա խնդիրն էր կասեցնել թշնամու հարձակումը և ուժգին հակահարվածներով նրան դուրս քշել ԽՍՀՄ-ի տարածքից: Պատերազմի սկզբնական փուլը՝ 1941թ. հունիսի 22-ից մինչև հուլիսի կեսերը, ավարտվեց ԽՍՀՄ զինված ուժերի պարտությամբ: Հակառակորդի զորքերը ներխուժեցին Խորհրդային Միության սահմանները և խորացան 300-ից 600 կմ: Փաստորեն, իրականացավ «Բարբարոսա» պլանի նախնական մասը: Թշնամին գրավեց Լատվիան, Լիտվան, գրեթե ամբողջ Բելոռուսիան, Էստոնիայի, Ուկրաինայի և Մոլդավիայի զգալի մասը: ԽՍՀՄ-ի 170 դիվի-

---

[1] Տե՛ս СССР – Германия. Документы и материалы, вып. 1, Вильнюс, 1989; вып. 2, Вильнюс, 1989; И. Ф л я й ш х а у э р. Пакт Гитлер – Сталин и инициатива германской дипломатии 1938 – 1939, М., 1991; Великая Отечественная война 1941 – 1945, кн. 1, М., 1998, с. 164 – 165.

[2] Великая Отечественная война 1941 – 1945, кн. 4, М., 1999, с. 214 – 215.

[3] Տե՛ս Великая Отечественная война 1941 – 1945, кн. 1, с. 94 – 98.

[4] Советский Союз в годы Великой Отечественной войны, М., 1985, с. 33 – 34.

զիաներից 28-ը լրիվ, իսկ 70-ը՝ կիսով չափ ջախջախվեցին: Մեծ էր նաև մարդկային կորուստների թիվը՝ Գերմանիայի ցամաքային ուժերի գլխավոր շտաբի սլետ գեներալ Ֆ. Հալդերը 1941 թ. հուլիսի 3-ին իր նոթատետրում գրառեց. «Զափազանցություն չի լինի, եթե ասեմ, որ Ռուսաստանի դեմ հաղթանակը նվաճվեց 14 օրում»[5]: Իսկ Ա. Հիտլերը, գլխապտույտ հաջողություններից չլացած մեկ օր անց հայտարարեց. «Ես մշտապես փորձում եմ ինձ դնել հակառակորդի տեղում: Գործնականում նա պատերազմն արդեն տանուլ է տվել»[6]: Բայց պատերազմի հետագա ընթացքը ցույց տվեց, որ դրանք սոսկ անհիմն ու սին հայտարարություններ էին:

Պատերազմը Կարմիր բանակի պարտության գործում ի հայտ բերեց բազմաթիվ թերություններ: Մի շարք միջոցառումներ ձեռնարկվեցին դրությունը շտկելու համար: Վերակառուցվեցին բանակային քաղաքական օրգանները: Վերականգնվեց զինվորական կոմիսարների հաստատությունը: Մեծ չափերով կիրառվեցին նաև պատժիչ միջոցներ: 1941 թ. օգոստոսի 16-ի թ. 270-րդ հրամանի համաձայն գերի ընկած զինվորներն ու հրամանատարները դիտվում էին դասալիքներ, իսկ նրանց ընտանիքի անդամները ենթակա էին աքսորի: Հրամանը պահանջում էր դասալիքներին ու գերությունն նախընտրող հրամանատարներին և զինվորներին տեղում գնդակահարել: Ռազմաճակատների ռազմական խորհուրդներին ուղղված հատուկ № 001919 գեկավար հրահանգում նշվում էր. «Ամուր ու կայուն հրամանատարները մեզանում այնքան էլ շատ չեն» և հրամայվում էր յուրաքանչյուր դիվիզիայում հուսալի մարտիկներից ստեղծել արգելափակիչ ջոկատ[7]:

1941 թ. դեկտեմբերին հնգամսյա պաշտպանական մարտեր մղելուց հետո խորհրդային զորքերին հաջողվեց ոչ միայն կասեցնել թշնամու առաջխաղացումը դեպի Մոսկվա, այլև հակահարձակման անցնել ու նրանց մայրաքաղաքից հետ շպրտել 100-ից 250 կմ[8]: Հաղթանակը ձեռք բերվեց ռազմաճակատում խորհրդային զորքերի ցուցաբերած հիրավի անօրինակ հերոսության ու արիության շնորհիվ, Մոսկվայի և մերձմոսկովյան բնակչության անդուլ աշխատանքով, թշնամու թիկունքում պարտիզանների ծավալած անզիջում պայքարի գնով: Թեև չափազանց մեծ էին խորհրդային ժողովուրդների կորուստները, բայց մեծ էր նաև Մոսկվայի հաղթանակի նշանակությունը: Այն շրջադարձային էր ոչ միայն Հայրենական մեծ պատերազմի, այլև Երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում: Մոսկվայի հաղթանակով վիժեցվեց հիտլերականների կայծակնային պատերազմ վարելու պլանը, իսկ Ֆ. Հալդերի բնութագրմամբ՝ «հոդս ցնդեց գերմանական բանակի անպարտելիության առասպելը: Ամռանը գերմանական բանակը Ռուսաստանում կհասնի նոր հաղթանակների, բայց դա չի վերականգնի նրա անպարտելիության մասին առասպելը»[9]:

---

[5] Великая Отечественная война, 1941 — 1945, с.166.
[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում, էջ 208:
[8] Նույն տեղում:
[9] Նույն տեղում, էջ 280:

* * *

Դեռևս մինչև Հայրենական մեծ պատերազմի սկիզբը խորհրդային հանրապետություններն ունեին իրենց զորամիավորումները: Սակայն 1938 թ. դրանց ազգային անվանումները և անձնակազմերը փոփոխության ենթարկվեցին: Ազգային զորամիավորումների վերակազմավորումն իրավայիորեն դիտվում է միութենական հանրապետությունների ինքնիշխան իրավունքների սահմանափակում, սխալ ու հապճեպ կատարված քայլ[10]:

1941 թ. նոյեմբերին ԽՍՀՄ պաշտպանության պետական կոմիտեն վերականգնեց նախկին ազգային զորամիավորումները, որոնց նյութատեխնիկական մատակարարումը և հանդերձավորումը կատարվում էր տվյալ հանրապետության կողմից, իսկ հրամանատարական և քաղաքական աշխատողներն ընտրվում ու նշանակվում էին կուսակցական և խորհրդային ղեկավար կազրերից: Դիվիզիաներն ունեին ազգային լեզվով հրատարակվող մամուլի օրգաններ:

Ազգային զորամիավորումների մեջ իրենց անցած մարտական ուղիով առանձնացան հայկական դիվիզիաները: Վերջիններիս մեջ էլ այս առումով առանձնանում է 89-րդ հրաձգային դիվիզիան, որի առաջին հրամանատարը գնդապետ Սիմեոն Զաքյանն էր[11]: 1942 թ. դիվիզիան Գրոզնի շարժվող թշնամու առաջխաղացումը կասեցնելու համար ծանր կորուստներ կրեց և մտցվեց 9-րդ բանակի կազմում իբրև պահեստի զորամիավորում: Այս ժամանակաշրջանում մարտերում կրած անհաջողությունների համար որոշվել էր դիվիզիան կազմացրել և այն վերակազմավորել հրաձգային բրիգադի: Ենթադրվում է, որ այս զորամիավորման պահպանման գործում մեծ է եղել ՀԿԿ առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանի դերը[12]: Այնուհետև դիվիզիան մասնակցեց Ստավրոպոլի և Կրասնոդարի երկրամասերի ազատագրմանը: 1943 թ. Թաման թերակղզին ազատագրելու համար այն արժանացավ Թամանյան կոչմանը: Այդ մարտերում աչքի ընկած մարտիկներին՝ Հունան Ավետիսյանին, Սուրեն Առաքելյանին և Ջահան Կարախանյանին 1944 թ. հետմահու շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում[13]: Այնուհետև դիվիզիան մասնակցեց Կերչի թերակղզու, ապա՝ Սևաստոպոլի ազատագրման մարտերին՝ արժանանալով Կարմիր աստղի, Կարմիր դրոշի և Կուտուզովի երկրորդ աստիճանի շքանշանների: 1944 թ. դիվիզիան անցավ Լեհաստան, 1945 թ. հունվարին մտավ Գերմանիա, ապրիլին իր խիզախ հրամանատարի՝ գեներալ-մայոր Նվեր Սաֆարյանի հրամանատարությամբ իբրև միակ ազգային դիվիզիա, մասնակցեց Բեռլինի ճակատամարտին: Թամանյան դիվիզիան անցավ 7250 կմ, նրա մարտիկներից 9-ը դարձան Խորհրդային Միության հերոս, 8-ը՝ Փառքի շքանշանի լրիվ ասպետ:

---

[10] Տե՛ս Կ. Հարությունյան. Հայկական ազգային զորամիավորումները 1918-1945 թթ., Երևան, 2002 թ., էջ 192–193:

[11] Թամանյան դիվիզիայի մասին տե՛ս Հայկական 89-րդ Թամանյան եռակի շքանշանակիր դիվիզիայի մարտական ուղին, փաստաթղթերի և նյութերի ժողովածու. Երևան, 1985, Ղ. Դալլաքյան. Մարտական 89, Երևան, 1966, Ա. Մ. Հակոբյան. Կովկասյան նախալեռներից մինչև Բեռլին-Էլբա. Երևան, 1995 և այլն:

[12] Տե՛ս Կ. Հարությունյան. նշվ. աշխ., էջ 235–236:

[13] Տե՛ս Գիրք հերոսների մասին. Երևան, 1964, էջ 359–362, 367–372, 443–446:

Ֆաշիզմի դեմ ազգային զորամիավորումների մղած մարտերում զգալի ներդրում ունեցավ 409-րդ հրաձգային դիվիզիան: Այն գործող բանակ մեկնեց 1942 թ. վերջերին և մարտեր էր մղում Մոզդոկի շրջանում, ապա մասնակցեց Ստավրոպոլի և Կրասնոդարի չատ բնակավայրերի ազատագրմանը: Դիվիզիայի մարտիկներն Ուկրաինայում աչքի ընկան Կիրովոգրադի համար մղվող մարտերում, 1944 թ. նրանք մասնակցեցին Մոլդավիայի և Ռումինիայի ազատագրմանը և Բուդապեշտի վրա կատարված գրոհին: 1945 թ. դիվիզիան կռվում էր Սլովակիայի մայրաքաղաք Բրատիսլավայի, ապա՝ Վիեննայի համար[14]:

1941 թ. Հայաստանում կազմավորվեց 408-րդ հրաձգային դիվիզիան, որը նախապես երթային վաշտեր ու դումարտակներ էր պատրաստում ռազմաճակատի համար: 1942 թ. հրաձգային դիվիզիան վերակազմավորվեց ազգայինի, որի խնդիրը գարձավ Հայաստանում խորհրդային սահմանների պաշտպանությունն ու ռազմաճակատ մեկնելուն նախապատրաստվելը: Իբրև քաղաշխատողներ դիվիզիա ուղարկվեցին Երևանի բուհերի մի խումբ դասախոսներ: 1942 թ. սեպտեմբերին այն փոխադրվեց Փոթի, ապա մասնակցեց Նովոռոսիյսկի և Տուապսեի պաշտպանության մարտերին: Տուապսեի կռիվներում խափանվեցին Անդրկովկաս ներխուժելու գերմանացիների փորձերը: 1942 թ. նոյեմբերին 408-րդ դիվիզիան կազմացրվեց[15]:

390-րդ հայկական հրաձգային դիվիզիան միակն էր, որը Խորհրդային Հայաստանում չէր կազմավորվել. այն ձևավորվել էր Վրաստանում: 1941 թ. նոյեմբերին դիվիզիան փոխադրվեց Թաման, մտավ 51-րդ բանակի կազմի մեջ, որը նահանջել էր Կերչի թերակղզուց և մարտերում ուժասպառ եղել: Դեկտեմբերին խորհրգային ուժերը դեսանտ իջեցրեցին Կերչում, և հաջորդ տարվա հունվարին ազատագրեցին այն: Դրան հետևեց գերմանացիների հակահարձակումը: Թշնամու դեմ արյունահեղ մարտերին մասնակցում էր նաև 390-րդ դիվիզիան: Սակայն Ղրիմի ռազմաճակատի հրամանատարությունը, դժդոհ մնալով այս զորամիավորման հրամանատարական կազմից՝ նրանց հեռացրեց իրենց զբաղեցրած պաշտոններից: Դիվիզիայի նոր հրամանատար նշանակվեց գնդապետ Սիմեոն Զաքյանը, որը մինչ այդ 89-րդ դիվիզիայի հրամանատարն էր: Նոր հրամանատարի նշանակումով սկսվեցին գիվիզիայի վերակազմավորման աշխատանքները: Նրա կազմում ընդգրկվեցին հայ զինվորներ և Հայաստանից եկած շուրջ 50 քաղաշխատողներ: 1942 թ. մարտ-մայիսին 51-րդ բանակի կազմում դիվիզիան պաշտպանական ծանր մարտեր էր մղում թշնամու ավիացիայի հուժկու ռմբակոծության և հրետակոծության տակ: Այդ մարտերում սպանվեց դիվիզիայի հրամանատար Ս. Զաքյանը: Թշնամին դրավեց Կերչը: Ղրիմի ռազմաճակատի զորքերը Կերչից դուրս բերվեցին և

---

[14] Տե՛ս 409-րդ հրաձգային Կիրովոգրադյան-Բրատիսլավյան, Բոգդան Խմելնիցկու շքանշանակիր հայկական դիվիզիայի մարտական ուղին (1941–1945 թթ.).– Փաստաթղթերի և նյութերի ժողովածու. մաս 1, Երևան, 1980:

[15] Ա. Մ. Հ ա կ ո բ յ ա ն. Հերոսական մարտերում. Երևան, 1975, С. М. С а р к и с я н. 408-ая Армянская стрелковая дивизия в битве за Кавказ, Ереван, 1985.

կենտրոնացվեցին Թամանում: Նրանց մեջ էին նաև մեծ կորուստներ կրած 390-րդ դիվիզիայի մարտիկները:

Հայրենական մեծ պատերազմին ակտիվ մասնակցած զորամիավորումներից էր 76-րդ հրաձգային դիվիզիան[16]: Այն կազմավորվել էր Հայաստանում 1922 թ. Ալ. Մյասնիկյանի ստորագրած հրամանի համաձայն: Դիվիզիայում հրամանատարական պաշտոններ էին ստացել 1918–1920 թթ. Հայաստանի Հանրապետության բանակում ծառայած հրամանատարները: Մինչ Հայրենական պատերազմի սկսվելը դիվիզիան տեղաբաշխված էր խորհրդաիրանական սահմանում: Պատերազմի սկսվելուց քիչ անց այս զորամիավորումը, որ հիմնականում համալրվեց Հայաստանի քաղաքացիներով, անցավ սահմանը և Իրանի տարածքով խորացավ մինչև Թավրիզ: Սակայն ռազմաճակատի ծանր դրությունը հարկադրեց դիվիզիան գործոց բանակ ուղարկել: 1941 թ. սեպտեմբերից մինչև աարեվերջ դիվիզիան ծանր մարտեր էր մղում Ուկրաինայի Պոլտավայի մարզում, 1942 թ. գարնանն այն մասնակցեց Հարավարևմտյան ռազմաճակատի մարտերին, իսկ ամռանը ասպահովեց 21-րդ բանակի նահանջը: 76-րդ դիվիզիան իր ներդրումն ունեցավ Ստալինգրադի ճակատամարտին՝ արժանանալով գվարդիականի կոչման, իսկ նրա 76-րդ համարը փոխվեց 51-ի: 1943 թ. պարգևատրվեց Լենինի շքանշանով: Այնուհետև դիվիզիան մասնակցեց Կուրսկի ճակատամարտին, Կալինինի մարզի, Բելոռուսիայի, Լատվիայի ու Լիտվայի ազատագրմանը:

261-րդ հրաձգային դիվիզիան միակ ազգային կազմավորումն էր, որ չմասնակցեց մարտերին: Այն մնաց հանրապետությունում և պաշտպանում էր պետական սահմանը: Նրա շարքերում մարտական պատրաստություն ստացան 10 հազար հայ զինվորներ, որոնք մեկնեցին ռազմաճակատ:

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմին մասնակցած հայկական 6 զորամիավորումները կարևոր դեր խաղացին ֆաշիզմի ջախջախման գործում: Հարկ է նշել նաև, որ դիվիզիաների կազմավորման շրջանում առկա էին բազմաթիվ թերություններ ու չլուծված հարցեր: Դրանցից ոչ բոլորն էին համալրված նախատեսված անձնակազմով, մի շարք մասնագիտությունների գծով պակասում էին կադրերը, որոնք պետք է պատրաստվեին զորանոցներում: Աչքի էր զարնում ռազմական տեխնիկայի, տրանսպորտի, կապի միջոցների ու հատկապես սպառազինության ոչ բավարար լինելը: Օրինակ՝ 390-րդ դիվիզիայի մարտական պատրաստվածության տեսչական ստուգումների տվյալներն ամենևին հուսադրող չէին: Այնուհանդերձ, դիվիզիան ուղարկվեց ռազմաճակատ՝ հաշվի առնելով այնտեղ տիրող ծանր դրությունը[17]:

* * *

Մոսկվայի հաղթանակին 1942 թ. հաջորդեցին Կարմիր բանակի անհաջողությունները ողջ ռազմաճակատով հարձակման անցնելու ժամանակ: Դրան հետևեցին թշնամու առաջխաղացումը դեպի Ուկրաինա, Խարկովի,

---

[16] Այդ մասին տե՛ս Կ. Ա. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. 51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին. Երևան, 1980:

[17] Տե՛ս Կ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայկական ազգային զորամիավորումները. 1918–1945 թթ., էջ 198–228:

Ղրիմի, Դոնի ոլորանի գրավումը: Գերմանական հրամանատարությունը որոշեց հարձակումը միաժամանակ զարգացնել երկու՝ Ստալինգրադ–Աստրախան և Կովկաս ուղղություններով: Կովկասում թշնամու խմբավորումներից մեկը գրավելու էր Նովորոսիյսկն ու Տուապսեն, իսկ մյուսը՝ Գրոզնին ու Բաքուն: Այնուհետև նախատեսվում էր տիրել Անդրկովկասի մյուս շրջաններին և կապեր հաստատել Թուրքական բանակի հետ, որի 26 դիվիզիաները կենտրոնացվել էին ԽՍՀՄ-ի սահմաններում[18]: Ստալինգրադի ճակատամարտում, որն սկսվեց 1942 թ. հունիսին և շարունակվեց մինչև 1943 թ. փետրվարը, տեղի ունեցան կատաղի մարտեր: Այս ճակատամարտում Կարմիր բանակը ջախջախեց ֆաշիստական Գերմանիայի ու նրա դաշնակիցների ուժերը և անցավ հարձակման: Վոլգայի և Դոնի ափերին տեղի ունեցած ճակատամարտից հետո փոխվեց «չեզոք երկրների» դիրքորոշումը Խորհրդային Միության նկատմամբ: Թուրքիան վերջնականապես հրաժարվեց պատերազմի մեջ մտնել, իսկ Ճապոնիան հետաձգեց խորհրդային Հեռավոր Արևելքի վրա հարձակումը:

1943 թ. ամռանը և աշնանը Կարմիր բանակը թշնամու դեմ նոր հաղթանակների հասավ: Ռազմավարական նախաձեռնությունն իր ձեռքում պահելու Հիտլերի փորձերն անհաջողությամբ ավարտվեցին, իսկ Կարմիր բանակն անցավ վճռական հարձակման: Պատերազմի հաջորդ փուլերում հետևեցին Կարմիր բանակի նոր ու փայլուն հաղթանակները և ֆաշիզմի լծից եվրոպական երկրների ազատագրումը:

* * *

Հայրենական մեծ պատերազմ զորակոչված հայերի թիվն անցնում էր 600 հազարից: Նրանք կռվում էին բոլոր ռազմաճակատներում և ընդգրկված էին Կարմիր բանակի տարբեր զորամասերում: Նրանցից շատերն զբաղեցնում էին հրամանատարական բարձր պաշտոններ:

Հայ ժողովրդի զավակները թշնամու հետ գոտեմարտի մեջ մտան պատերազմի հենց առաջին օրերից: Նրանք զգալի թիվ էին կազմում Մերձբալթիկայում և ակտիվորեն մասնակցեցին չորս ամիս տևած պաշտպանական մարտերին[19]:

Արևմտյան Ուկրաինայում, Բելոռուսիայում և Մերձբալթիկայում ծավալված օդային մարտերում աչքի ընկան հայ օդաչուները: Նրանցից Լ. Զափչախովն առաջինն էր, որ 1942 թ. արժանացավ Խորհրդային Միության հերոսի կոչմանը: Իսկ Ս. Հայրապետովն իր այրվող ինքնաթիռն ուղղեց թշնամու տանկային շարասյան վրա: Նրա սխրանքը միայն երկու օր անց կրկնեց Ն. Գաստելլոն: Ռազմական արվեստի վարպետությամբ ու ցուցաբերած անօրինակ սխրանքով աչքի ընկավ Բալթյան օդային նավատորմում ծառայող Ն. Ստեփանյանը, որին 1942 թ. շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: 1945 թ. հետմահու նա արժանացավ Խորհրդային Միության կրկնակի հերոսի կոչման:

---

[18] Տե՛ս Советский Союз в годы Великой Отечественной войны, с.193.

[19] Այս մասին տե՛ս Մ. Սահակյան. Սովետական Մերձբալթիկայի համար մղված մարտերում (1941–1945). Երևան, 1981:

Հայ զորահրամանատարները պատասխանատու պաշտոններ էին զբաղվում Մերձբալթյան հատուկ ռազմական օկրուգում, այնուհետև՝ Հյուսիս-արևմտյան ռազմաճակատի կազմավորումներում: Օկրուգի օպերատիվ բաժնի պետը գնդապետ Ս. Կինոսյանն էր, նրա տեղակալը՝ փոխգնդապետ Ս. Սարգսյանը, 183-րդ լատիշական դիվիզիայի հրամանատարի տեղակալը՝ փոխգնդապետ Ս. Կարապետյանը, 28-րդ հրետանային գնդի շտաբի պետը՝ մայոր Գ. Սիրզոյանը և ուրիշներ:

Պատերազմի առաջին օրից շուրջ մեկ ամիս թշնամու գերակշռող ուժերին համառ ու անզիջում պայքարով տեղում էին գամել Բրեստի ամրոցի կայազորի մարտիկները, որոնց թվում կային 200-ից ավելի հայեր: Թշնամին տիրեց ամրոցին միայն այն ժամանակ, երբ նրա հերոս պաշտպաններից շատերն արդեն զոհվել էին:

Բրեստի շրջանում մի քանի օր շարունակ հակառակորդի մեծաթիվ ուժերի դեմ մարտեր էր մղում 113-րդ հրաձգային դիվիզիան գեներալ-մայոր Ֆ. Ալավերդյանի հրամանատարությամբ: Խիզախ հրամանատարը կռվում էր նույնիսկ այն ժամանակ, երբ նրա դիվիզիան աքցանի մեջ էր առնվել հակառակորդի կողմից, իսկ ինքը մարտերից մեկում վիրավորվել էր: Գերության մեջ նա մերժեց ֆաշիստներին ծառայագրվելու բոլոր առաջարկները, ճամբարում ծավալեց հակաֆաշիստական գործունեություն և 1942 թ. ապրիլին Նյուրնբերգում գնդակահարվեց[20]:

Բելոռուսիայի և Ուկրաինայի պաշտպանական օդային մարտերին մասնակցած խիզախ օդաչուներից էր Պ. Գազազյանը, որն առաջինը պարգևատրվեց Կարմիր դրոշի շքանշանով:

Հարավարևմտյան ռազմաճակատում հրետանու պետն էր գեներալ-լեյտենանտ Մ. Պարսեղովը, շտաբի օպերատիվ բաժնի պետը՝ գեներալ-մայոր Հ. Բաղրամյանը, քաղվարչության պետը՝ Ս. Գալաջևը, դիվիզիաների հրամանատարներ էին Ա. Սարգսյանը, Տ. Դեղեօղլին: Հարավային ռազմաճակատում աչքի ընկան ռազմաճակատի հրետանու շտաբի պետ, գնդապետ Ի. Վեքիլովը, որը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Սարիղամիշում կռվել էր թուրքերի դեմ, ռազմաճակատի ռազմաօդային ուժերի հրամանատար գեներալ-մայոր Ս. Խուդյակովը (Արմենակ Խանփերյան), 12-րդ բանակի շտաբի պետ, գեներալ-մայոր Բ. Առուշանյանը, ռազմաճակատի գլխավոր վիրաբույժ Ա. Հարությունյանը և ուրիշներ:

Պատերազմի առաջին շրջանի պատմության մեջ աննախադեպ էր 1941 թ. հուլիսի 17-ին Սեստրինովկայի մարտերում կրտսեր սերժանտ Մ. Բալայանի կողմից թշնամու 12 տանկերի ոչնչացումը[21]:

Հայ ժողովրդի բաղում զավակներ՝ նշանավոր զորապետներ, սպաներ, զինվորներ ու աշխարհազորայիններ, իրենց ավանդը ներդրեցին Մոսկվայի համար մղվող ճակատամարտում: Գեներալ-մայոր Հ. Բաղրամյանը Ելեցյան դործողության իրականացնողներից էր, որով ոչ միայն ձախողվեցին Մոսկվան օղակի մեջ առնելու թշնամու փորձերը, այլև նրան ետ շպրտեցին 80-ից 100 կմ: Այդ գործում մեծ էր նաև Հարավարևմտյան

[20] Տե՛ս Ա. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Միասնական շարքերում. Երևան, 1975, էջ 84-100:

[21] Տե՛ս Կ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941–1945). Երևան, 2002, էջ 17:

ռազմաճակատի հրետանու հրամանատար Մ. Պարսեզովի, նրա տեղակալ Ի. Վեքիլովի, քաղվարչության պետ Ս. Գալաջևի ներդրումը[22]: Մոսկվայի ճակատամարտում 33-րդ բանակի պետն էր Ս. Կինոսյանը, որն աչքի էր ընկնում իր տեսական խոր գիտելիքներով: Ս. Կինոսյանն արժանացավ գեներալ-լեյտենանտի կոչման:

Մոսկվայի համար մղված մարտերում աչքի ընկած զորամիավորումներից էին 239-րդ և 340-րդ հրաձգային գիվիզիաները, որոնց հրամանատարներն էին Հ. Մարտիրոսյանը և Ս. Մարտիրոսյանը: Մոսկվայի աշխարհազորայինների կազմում մայրաքաղաքի պաշտպաններից էին Հ. Ալիբեդյանը և Գ. Կուլոզլյանը, որոնք զոհվեցին մարտերում:

Ստալինգրադի մարտերին մասնակցեցին շուրջ 30 հազար հայ մարտիկներ, որոնցից 10 հազարը զոհվեցին մարտերում[23]: Ստալինգրադի ճակատամարտի ակտիվ մասնակիցներից էին գեներալ-մայորներ Ս. Գալաջևը, Ի. Վեքիլովը, Հ. Թումանյանը, «Պավլովի տան» պաշտպաններից՝ քաղղեկ Վ. Ավակիմովը: Ստալինգրադի հերոսների թվում էր ավիաէսկադրիլիայի հրամանատար Ս. Բուռնազյանը: Կառավարական բարձր պարգևների էին արժանացել գնդի հրամանատար Մ. Մագաթյանը, ավագ գումարտակային կոմիսար Գ. Կալուստովը, ավագ և կրտսեր սպայական կազմից շատերը: Այստեղ իր բրիգադով կռվում էր փոխգնդապետ Ս. Կարապետյանը: Ստալինգրադում հատկապես աչքի ընկավ 51-րդ հայկական լեռնահրաձգային գիվիզիան:

Օրյոլ–Կուրսկ–Բելգորոդ ուղղությամբ 1943 թ. հուլիս-օգոստոսին ծավալված մարտերում երկու հայորդիների՝ գնդապետ Գ. Կալուստովին և դասակի հրամանատար Վ. Իոանիսյանին հետմահու շնորհվեց Խորհրդային Միության հերոսի կոչում: Հ. Բաղրամյանի հրամանատարությամբ 11-րդ բանակը ռազմաճակատի մյուս ստորաբաժանումների հետ մասնակցեց Օրյոլի գրավմանը: Կարմիր բանակի ռազմաօդային ուժերի հրամանատարի տեղակալ Ս. Խուդյակովը համակարգում էր օդային երկու բանակների փոխգործողությունները: Իրենց խիզախ ու անվեհեր մարտերով Կուրսկի ճակատամարտում աչքի էին ընկնում հայ օդաչուները, որոնց թիվն անցնում էր մի քանի հարյուրից[24]: Օդաչուներին չէին զիջում տանկիստները: Գնդապետ Հ. Բաբաջանյանի բրիգադը մասնակցեց Կուրսկի ճակատամարտին, որի համար նա արժանացավ կառավարական բարձր պարգևների: Նման պարգևների արժանացան առաջին և երկրորդ տանկային բանակներում կռվող շատ հայորդիներ:

Լենինգրադի հայ պաշտպանների մեջ իր խիզախությամբ առանձնանում էր բանակի ռազմական խորհրդի անդամ Բ. Գալստյանը, որը 1942 թ. դեկտեմբերին զոհվեց Պուլկովոյում: Սրտառուչ են խիզախ հայորդու մասին Սլեքսանդր Նևսկի մայրավանքում նրա շիրմի վրա գրված հետևյալ

---

[22] К. А р у т ю н я н. Участие армянского народа в Великой Отечественной войне Советского Союза (1941 – 1945). Ереван, 2004, с. 76-77.

[23] Տե՛ս С. Г. М и р з о я н. Участие армянского народа в Сталинградской битве. Дисс. на соискание ученой степени кандидата исторических наук, Ереван, 1977, с. 141.

[24] Տե՛ս Կ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941–1945), էջ 40–42:

խոսքերը. «Ընկեր, հանիր գլխարկդ: Այստեղ թաղված է հայ ժողովրդի պանծալի զավակ, Լենինգրադի հերոս պաշտպան, գեներալ-մայոր Բենիամին Հովհաննեսի Գալստյանը»[25]*: Իսկ ռուս ականավոր գրող Ն. Տիխոնովը, լարձր գնահատելով նրա սխրանքը, գրել է. «Գալստյանի անունը մենք կմտցնենք հերոսների՝ Լենինգրադի պաշտպանների անջնջելի ցուցակում և կհիշենք նրան ընդմիշտ, որպես մեր մեծ քաղաքի սքանչելի հայրենասերի»*[26]*: Լենինգրադի համար մարտնչած հայ ժողովրդի քաջարի զավակներից է բլոկադան ճեղքող դումարտակի հրամանատարի տեղակալ Հ. Մելքոնյանը: Նա վիրավորված հրամանատարի փոխարեն ստանձնեց դումարտակի հրամանատարությունը, գրոհով հասավ հակառակորդի կողմից ամրացված թիվ 1 բանավանը և դարձավ Լենինգրադյան ու Վոլխովյան ռազմաճակատների մարտիկների հանդիպման փաստը վավերացնողներից մեկը*[27]*: Իսկ լեյտենանտ Վ. Ակոպովը կյանքի գնով ականազերծեց Լենինգրադ - Կրոնշտադ հատվածը: Հայ ժողովրդի զավակներից շատերը հրամանատարական կարևոր պաշտոններ էին զբաղեցնում հերոս քաղաքի մարտերին մասնակցած տարբեր միավորումներում:*

1943 թ. օգոստոս – 1944 թ. հոկտեմբեր ժամանակահատվածում Կարմիր բանակի ուժերի հաղթական մարտերն ավարտվեցին Ուկրաինայի ազատագրմամբ: Դրան մասնակցած 9 դիվիզիաներ կազմավորվել կամ համալրվել էին Հայաստանում: Ուկրաինայի պաշտպանական և ազատագրական մարտերին մասնակցած հայորդիների թիվն անցնում էր 100 հազարից, իսկ միայն նրա ազատագրական մարտերում զոհվածների թիվը հասնում էր 30 հազարի[28]*: Այդ մարտերին մասնակցած 21 հայորդիներ արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման*[29]*: Նրանց թվում էին Ա. Կարապետյանը, Հ. Բաբաջանյանը, Ա. Ղազարյանը: Այնտեղ իր կորպուսով կռվում էր Ա. Մարտիրոսյանը, որի զորամիավորումները Կիևի առաջին ազատագրողներից էին:*

1944 թ. հունիս-օգոստոսին Կարմիր բանակի կազմում հայ ժողովրդի զավակները մասնակցում էին Բելոռուսիայի ազատագրմանը[30]*: Իր զորավարական տաղանդով և ցուցաբերած խիզախությամբ առանձնանում էր 1-ին Մերձբալթյան ռազմաճակատի հրամանատար, բանակի գեներալ Հ. Բաղրամյանը: Նրա հրամանատարությամբ գործող ռազմաճակատի 156 զինծառայողներ արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման: 1944 թ. հուլիսի 29-ին Հ. Բաղրամյանը ևս արժանացավ այդ կոչմանը: Նրա զորքերն ազատագրել են հազարավոր բնակավայրեր, ոչնչացրել թշնամու տասնյակ հազարավոր զինվորներ և մեծ թվով մարտական տեխնիկա*[31]*: Բելոռուսիայի ազատագրության մարտերին մասնակցել են կոր-*

---

[25] Ա. Ն. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Միասնական շարքերում, էջ 146–147:

[26] Սովետական Հայաստանի զավակները Լենինգրադի պաշտպաններ. Երևան, 1946, էջ 6-11:

[27] Տե՛ս История Великой Отечественной войны, т 3, М., 1964, с.139.

[28] Նույն տեղում, էջ 48:

[29] Տե՛ս Կ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Հայ ժողովրդի մասնակցությունը Հայրենական մեծ պատերազմին (1941–1945), էջ 44:

[30] Տե՛ս Ե. Խ ա լ ե յ ա ն. Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին. Երևան, 1975:

[31] Հ. Բաղրամյանի մասին տե՛ս Ա. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Մարշալ Բաղրամյան. Երևան, 1978, Կ. Հ ա ր ո ւ թ յ ո ւ ն յ ա ն. Մարշալ Բաղրամյան. Երևան, 1997:

պուսի հրամանատար, գեներալ Բ. Առուշանյանը, բանակի հրետանու հրամանատար Կ. Հախնազարյանը, հրաձգային դիվիզիաների հրամանատարներ Ա. Դանիելյանը, Ն. Բալոյանը, դնդի հրամանատար Խ. Համբարյանը և ուրիշներ: Խորհրդային ուժերն այնուհետև ձեռնամուխ եղան Լեհաստանի, Հարավսլավիայի, Հունգարիայի, Ավստրիայի, Չեխոսլովակիայի ազատագրմանը:

1945 թ. հունվար-մայիսին տեղի ունեցան ֆաշիստական Գերմանիայի ջախջախման ու Բեռլինի գրավման գործողությունները: Լեհաստանում մարտական գործողություններին մասնակցում էին 50 հազար հայորդիներ, որոնցից 15-ն արժանացան Խորհրդային Միության հերոսի կոչման, իսկ Բեռլինի գրավման մարտերում այդ պատվավոր կոչումը շնորհվեց 9 հոգու: Բեռլինի գրավման մարտերում զորավարական իրենց տաղանդով փայլեցին Ս. Կարապետյանը, Ն. Սաֆարյանը, Ի. Գասպարյանը, Հ. Բաբաջանյանը, Գ. Բուռնազյանը:

Հայրենական Մեծ պատերազմն ավարտվեց 1945 թ. սեպտեմբերին, երբ Կարմիր բանակը ջախջախեց միլիտարիստական Ճապոնիայի մեկ միլիոնանոց կվանտունյան բանակը: Այստեղ նույնպես հայ ժողովրդի զավակներն աչքի ընկան: Ավիացիայի մարշալ Ա. Խուդյակովը, որ օդային բանակի հրամանատարն էր, նորամուծություն մտցրեց ավիացիայի գործողություններում: Խուդյակովի բանակում կռվում էին 200-ից ավելի հայեր, որոնցից 100-ը արժանացան պարգևների: Ռազմաճակատի հրետանու հրամանատարն էր գեներալ-լեյտենանտ Մ. Պարսեղովը, հակաօդային պաշտպանության պետը՝ գեներալ-մայոր Գ. Զայլախյանը: Հայ ժողովրդի զավակներից շատերը զբաղեցնում էին հրամանատարական այլ պաշտոններ:

Հայրենական մեծ պատերազմի տարիներին հայ ժողովրդի զավակներից շատերն ընդգրկվել էին թշնամու թիկունքում ստեղծված ընդհատակյա կազմակերպություններում ու պարտիզանական շարժման մեջ: Ընդհատակյա պայքարը և պարտիզանական շարժումը համաժողովրդական պայքարի դրսևորումներից էին: Հայ պարտիզաններն ու ընդհատակայինները հիմնականում ֆաշիստների դրված տարածքներում շրջապատման մեջ ընկած ռազմադերիներն էին ու լեգեոնականները, դերությունից փախածները, ինչպես նաև հայաբնակ վայրերի բնակիչները[32]: Հայ ընդհատակայինները կազմակերպում էին խափանարարական գործողություններ, Կարմիր բանակի հաջողությունների վերաբերյալ տեղեկատվություն տարածում, թշնամու ծրագրվող գործողությունների մասին իրազեկում խորհրդային հրամանատարությանը և այլն: Բելոռուսիայի Մոգիլյով քաղաքում ստեղծված ընդհատակյա կազմակերպության ակտիվիստ Հ. Զաքարյանը հայտնի էր իր կատարած խափանարարական ու հետախուզական մի շարք գործերով: Ուկրաինայի Կրասնոդոն քաղաքում գործում էր «Ե-

---

[32] Հայ պարտիզանների մասին տե՛ս Վ. Ղ ա զ ա խ ե ց յ ա ն. Միկոյանի անվան պարտիզանական ջոկատը. Երևան, 1965, Ն ո ւ յ ն ի՝ Հայ պարտիզանները, Երևան, 2004, Ե. Խ ա լ ե յ ա ն. Հայ ժողովրդի զավակների մասնակցությունը Բելոռուսիայի համար մղված մարտերին, Ն ո ւ յ ն ի՝ Թշնամու թիկունքում. Երևան, 1990, Ն ո ւ յ ն ի՝ Ղրիմի և Հյուսիսային Կովկասի պարտիզանական շարժման պատմությունից (1941–1944), Երևան, 1981. Մ. Մ ա հ ա կ յ ա ն, նշվ. աշխ.:

ըիտասարդ գվարդիա» կազմակերպությունը, որի ակտիվ անդամներից էին Մայա Պեգլիվանովան (Փեհլիվանյան) և Գեորգի Հարությունյանը: Գեսապոն հայտնաբերեց այս կազմակերպությունը և գնդակահարեց նրա անդամներից մի քանիսին, որոնց մեջ էր 16-ամյա Մայան:

Հայ ժողովրդի զավակները Կիևում, Կիրովոգրադի, Սմոլենսկի, Պոլտավայի մարզերում, Ղրիմի Թեոդոսիա քաղաքում, Սիմֆերոպոլում, Դոնի Ռոստովում, Կիսլովոդսկում և Ռոստովի մարզի հայաբնակ վայրերում ղեկավարում էին ընդհատակյա կազմակերպություններ կամ դրանցում ակտիվ գործողություններ ծավալում: Նրանցից շատերը ԽՍՀՄ մյուս ժողովուրդների հետ ընդգրկված էին պարտիզանական առանձին ջոկատներում: 1942 թ. ԽՍՀՄ պաշտպանության պետական կոմիտեում ստեղծվեց պարտիզանական շարժման կենտրոնական շտաբ, շարժումը դարձավ առավել զանգվածային, ամրապնդվեց բնակչության կապը պարտիզանների հետ:

1943 թ. երկրորդ կեսից ստեղծվեցին պարտիզանական խոշոր միավորումներ՝ բրիգադներ, կորպուսներ, նույնիսկ դիվիզիաներ: Դրանք խորտակում էին թշնամու էշելոնները, պայթեցնում կամուրջները, ոչնչացնում հակառակորդի կենդանի ուժը, կազմակերպում ռազմարշավներ, մղում «ռելսային պատերազմ»: 1943 թ. Ուկրաինայի 18 պարտիզանական միավորումներում ընդգրկված էին ավելի քան 600 հայ պարտիզաններ: Այնտեղ գործում էր «Հաղթանակ» ջոկատը, որը հիմնադրել էին ճամբարներից փախածները: Ջոկատում ընդգրկված էին 45 հայեր: Այն գործում էր միայնակ, առանց «Մեծ երկրի» հետ կապ ունենալու: Ջոկատի հրամանատարը Ս. Հարությունյանն էր: 1944 թ. հայ պարտիզանները միացան Կովպակի անվան 1-ին ուկրաինական պարտիզանական դիվիզիային և շարունակեցին պայքարը:

Հայկական պարտիզանական ջոկատներից ամենախոշորը Ա. Միկոյանի անվան ջոկատն էր, որը կազմավորվել էր 1943 թ. Ժիտոմիրի մարզում: Սկզբում այն ուներ 250 անդամ, իսկ հետո նրանց թիվը հասավ 325-ի: Ա. Միկոյանի անվան ջոկատի հրամանատարն էր Ա. Հովսեփյանը: Ջոկատն ընդգրկվեց ուկրաինական հեծյալ պարտիզանական ջոկատների մեջ նրա կազմում մարտական գործողություններ ծավալելով Ուկրաինայի տարբեր մարզերում, Բելոռուսիայում և Լեհաստանում: Բելոռուսիայի կռիվներին նույնպես մասնակցում էին հայ պարտիզաններ: Խ. Մաթևոսյանի ղեկավարած Զապաևի անվան բրիգադը ոչ միայն ոչնչացրել էր մեծ քանակությամբ մարտական տեխնիկա, գնացքներ, կամուրջներ, ավտոմեքենաներ, այլև մասնակցել էր Մինսկի ազատագրմանը: Բրեստի մարզում էր գործում Ս. Արզումանյանի ղեկավարած բրիգադը, ուր ընդգրկված էին 2000 պարտիզան: Ջափազանց հանդուգն էր Բելոռուսիայի Լիգա քաղաքի օդանավակայանում ռազմագերի Ա. Կարապետյանի կատարած քայլը: Հայ օդաչուն 1944 թ. իր երկու ընկերների հետ գերմանական երեք ինքնաթիռներով վայրէջք կատարեց բելոռուսական պարտիզանների մոտ:

Ուկրաինայի և Բելոռուսիայի ջոկատներից բացի համանման ջոկատներ էին ստեղծվել նաև Ղրիմում, Մերձբալթիկայում, Լենինգրադի և Կալինինի մարզերում, որոնցում ընդգրկված էին շատ հայեր:

Ֆաշիզմի դեմ պայքարում անմասն չմնաց նաև աշխարհով մեկ տարագրված հայությունը: Սփյուռքահայությունը թշնամու դեմ մարտնչում էր դաշնակից երկրների բանակներում, պարտիզանական շարժման մեջ կամ էլ՝ ընդհատակում: Նրանցից շատերը գարձան այդ երկրների ազգային հերոսներ, ոմանք ձևավորվեցին որպես բանակների բարձրաստիճան հրամանատարներ: Միայն ԱՄՆ-ի բանակում պատերազմին մասնակցում էին 20 հազար հայեր[33]: Նրանք ծառայում էին տարբեր զորամիավորումներում, և շատերն աչքի ընկան իրենց խիզախությամբ: Նրանցից էին Ճ. Պետրոսյանը, Է. Դերվիշյանը: Վերջինս պարգևատրվեց «Կոնդրեսի պատվո մեդալ» շքանշանով, որին արժանացել էր ընդամենը 87 հոգի[34]: Ամերիկյան բանակում մեծ էր հայ օդաչուների թիվը: Նրանցից աչքի ընկան Զ. Տերտերյանը, Ս. Պարսամյանը, Է. Կոչտոյանը, Ժիրայր, Հայկ և Արծվիկ Կատարյան եղբայրները: «Թռչող բերդ» օդանավի հրամանատար Ժ. Գևորգյանը ռմբակոծել է Բեռլինը, Մյունխենը, Համբուրգը, Շտուտգարդը և արժանացել պարգևների: Ամերիկյան բանակում գեներալների կոչման արժանացան Ջ. Մարտիկյանը և Հ. Շեքերջյանը:

Մեծ էր հայերի ներդրումը Ֆրանսիական Դիմադրության շարժման մեջ: Ֆրանսիայի ազգային ճակատի հետ սերտորեն համագործակցում էր Ֆրանսահայ ազգային ճակատը, որի առանձին խմբերը գործում էին տարբեր քաղաքներում: Ֆրանսահայ դիմադրականներն ունեին իրենց մամուլի օրգանները: Ֆրանսիական Դիմադրության շարժման պատմության մեջ փայլուն էջեր դրեց պարտիզանական ինտերնացիոնալ ջոկատի հրամանատար Մ. Մանուշյանը: Նրա ղեկավարությամբ պարտիզանները Փարիզում և շրջակայքում իրականացնում էին խափանարարական գործողություններ, ոչնչացնում ֆաշիստներին, սակայն գեստապոն հայտնաբերեց Մանուշյանի խմբի անդամներին և 1944 թ. դնդակահարեց: Հետմահու Մ. Մանուշյանն արժանացավ Ֆրանսիայի ազգային հերոսի կոչման: Հանուն Ֆրանսիայի ազատության մարտնչել են նաև հայ ժողովրդի զավակներ Ա. Զաքրյանը, Լ. Ասլանյանը, Ա. Դավթյանը, Ա. Ասլանյանը և ուրիշներ[35]: Հակաֆաշիստական պայքարը Ֆրանսիայում ծավալվեց, երբ 1943 թ. երկրորդ կեսին այնտեղ տեղափոխվեցին հայկական լեգեոնի դումարտակները: Լեգեոնականները, ներգրավվելով Դիմադրության շարժման մեջ, զգալի ներդրում ունեցան ֆաշիզմի դեմ մղվող պայքարում[36]:

Հայերից բաղկացած ընդհատակյա կազմակերպություն է գործել նաև Հոլանդիայում, որի անդամներն այնտեղ տեղափոխված հայկական լեգեոնի 4-րդ գումարտակից էին:

Հունաստանում ֆաշիզմի դեմ պայքարում իր բաժինն ունեցավ ավելի քան 25 հազարանոց հունահայ գաղութը: Ֆաշիստները զանգվածային կոտորած կազմակերպեցին իրենց դեմ կռվի ելած Աթենքի հայկական թաղամասի բնակչության նկատմամբ: Շուրջ 300 հայեր իրենց կյանքը չխնայեցին Հունաստանի ազատության համար :

---

[33] Կ. Հարությունյան. Հայ ժողովրդի մասնակցությունը երկրորդ համաշխարհային պատերազմին. Երևան 2001, էջ 32–33:
[34] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն. հ. VIII, Երևան, 1970, էջ 159–160:
[35] Տե՛ս նույն տեղում, էջ 161-163:
[36] Տե՛ս Վ. Ղազախեցյան. Հայ պարտիզանները, էջ 117-120:

Մեծ էր բուլղարահայության ներդրումը հիտլերականների ջախջախման գործում: Այստեղ հայ ժողովրդի զավակները գործում էին բուլղարական բանակի շարքերում, պարտիզանական ջոկատներում և ընդհատակում: Վառնայում ֆաշիստները շատ հայորդիների գնդակահարեցին և նետեցին ծովը: Մեկ տարի շարունակ պարտիզանների ջոկատում ֆաշիստների դեմ կռվում էր 18 ամյա անվեհեր Հ. Ռազգրադլյանը, որին դահիճները կասանքների ենթարկեցին[37]:

Հայ պարտիզանները գործում էին նաև Հարավսլավիայում, Լեհաստանում, Իտալիայում, Չեխոսլովակիայում և Գերմանիայում:

Ֆաշիզմի դեմ սիյուռքահայության պայքարն արտահայտվեց նաև խորհրդային բանակին ցույց տված նյութական օգնությամբ: Սիյուռքահայության հանգանակած միջոցներով ստեղծվեցին «Սասունցի Դավիթ» և «Գեներալ Բաղրամյան» ինքնաթիռային շարասյունները:

* * *

Հայ ժողովրդի կյանքում մեծագույն իրադարձություն էր 1943 թ. պատերազմի ծանր պայմաններում Գիտությունների ակադեմիայի ստեղծումը: Ակադեմիայի հիմնադիր անդամների կազմում էին ականավոր գիտնականներ Վ. Համբարձումյանը, Աբրահամ և Արտեմ Ալիխանյանները, Հ. Օրբելին, Լ. Օրբելին, Հ. Բունիաթյանը, Մ. Աբեղյանը, Հ. Մանանդյանը, Հ. Աճառյանը, Գ. Ղափտնցյանը, Ս. Մալխասյանը, Ա. Տերտերյանը, բանաստեղծ Ա. Իսահակյանը և ուրիշներ: Գիտությունների ակադեմիան իր ներդրումն ունեցավ երկրի պաշտպանության ամրապնդման գործում: Ակադեմիան դարձավ գիտական կադրերի պատրաստման գարբնոց: Ստեղծվեցին գիտության տարբեր բնագավառների ազգային դպրոցներ, որոնք միջազգային մեծ ճանաչում բերեցին հայ գիտնականներին:

Հայրենական մեծ պատերազմը փոխեց Հայաստանի տնտեսական համամասնությունը: Թիկունքը վերակառուցվեց ռազմաճակատի պայմաններին համապատասխան: Թեև Հայաստանի բազմաճյուղ արդյունաբերությունը հնարավորություն էր տալիս զարգացնել ռազմական արդյունաբերությունը, այդուհանդերձ, անհրաժեշտ էր հաղթահարել մի շարք դժվարություններ, որոնք ի հայտ էին եկել պատերազմի հետևանքով: Ամենից առաջ խզվել էին հանրապետությունների միջև գոյություն ունեցող տնտեսական կապերը: Հայաստանը չէր ստանում վառելիքահումքային պաշարներ և սարքավորումներ: Արդյունաբերական ձեռնարկությունների բանվորների ու ինժեներատեխնիկական անձնակազմի զգալի մասը զորակոչվել էր ռազմաճակատ, զգացվում էր բանվորական ձեռքերի պակաս և այլն: Առկա դժվարությունները հաղթահարվեցին վառելիքահումքային նոր պաշարների հայտնաբերման և տարածաշրջանային տնտեսական նոր կապերի հաստատման շնորհիվ: Ուկրաինայից ստացվող կոքսին ու քարածխին փոխարինեց Վրաստանից ներկրվող ածուխը, շահագործման հանձնվեց Ջաջուռի ածուխը, Ադրբեջանից և Վրաստանից ստացվեցին սև մետաղներ:

---

[37] Հայ ժողովրդի պատմություն. հ. VIII, էջ 168:

Հայաստանի արդյունաբերությունը պատերազմի տարիներին սկսեց թողարկել զենք ու զինամթերք, դումակային, հակատանկային, հակաքիմիական, հակաօդային պաշտպանության և քողարկման, ինչպես նաև կապի ու ինժեներական ծառայության գույք: Յուրացվեց ականանետների, տարբեր տեսակի ականների և ավիառումբերի պատյանների, հրկիզիչ հեղուկների խառնուրդներով շշերի արտադրությունը: Արդյունաբերական ձեռնարկությունները ռազմաճակատին մատակարարում էին հագուստի, համազգեստի և դործվածքեղենի 53 տեսակ արտադրանք[38]: Եթե զենքի ու զինամթերքի արտադրությամբ հանրապետության ձեռքբերումները սահմանափակ էին, ապա հագուստեղենի արտադրության և՛ տեսականին, և՛ ծավալները զգալի էին:

Հանրապետության արդյունաբերության առաջատար ճյուղերից մեկը՝ քիմիական արդյունաբերությունն արտադրում էր ստրատեդիական հումք՝ կաուստիկ սոդա, սինթետիկ կաուչուկ, կալցիումային կարբիդ, պղնձարջասպ: Ռազմաճակատի կարիքները բավարարելու համար ոչ միայն ընդլայնվեցին քիմիական արտադրանքի ծավալները, այլև յուրացվեցին նոր արտադրատեսակների՝ հեղուկ քլորի, ռետինատեխնիկական իրերի, պլաստմասայի, լաքերի, հակատանկային հեղուկ վառելիքի և այլ նյութերի արտադրությունը: Հայաստանի քիմիական դործարանների արտադրանքի հիման վրա կառուցվեցին նոր խոշոր դործարաններ:

Մեքենաշինության ու մետաղամշակության ձեռնարկությունները, որոնք պատերազմի սկզբում հիմնականում արտադրում էին զենք ու զինամթերք, հետագայում վերակառուցվեցին, իսկ նոր դործարանները մասնագիտացան հաստոցաշինության, էլեկտրամեքենաշինության, սարքաշինության, ավտոմոբիլային ու ավիացիոն արդյունաբերության բնագավառներում:

Պատերազմի սկզբին պղնձի արտադրության բնագավառում նկատվեցին զգալի դժվարություններ, որոնք հաղթահարվեցին 1944–1945 թթ.: Հիմնադրվեցին դունավոր մետալուրդիայի նոր՝ ալյումինի և մոլիբդենի ենթաճյուղեր:

Պատերազմի պայմաններում սննդարդյունաբերության ձեռնարկությունները պետք է ապահովեին ոչ միայն բնակչության, այլ նաև ռազմաճակատի պահանջները: Թեև զգալի էր հումքի և մթերքի պակասը, սննդարդյունաբերական ձեռնարկությունների կարողություններն ընդլայնվեցին, յուրացվեցին նոր արտադրատեսակներ: Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունների վերակառուցումն իրականացվում էր էվակուացված դործարանների սարքավորումների հաշվին: Շահագործման հանձնվեցին արդյունաբերական 30 նոր ձեռնարկություններ և 110 արտադրամասեր:

Հայրենիքի պաշտպանության շահերին իրենց աշխատանքները նպատակաուղղեցին նաև դյուղի աշխատավորները: Աշխատող ձեռքերի պակասը հարկադրել էր կանանց ու դպրոցականներին փոխարինել ռազմաճա-

---

[38] Տե՛ս Советская Армения в годы Великой Отечественной войны (1941–1945). Сб. док. и материалов, Ереван, 1975, с. 332–334.

կատ մեկնածներին: Աշխատելով օրական 16-ից 18 ժամ թիկունքի աշխատավորներից շատերը մի քանի անդամ գերակատարում էին իրենց առաջադրանքները: Նրանք իրենց լարված ու հերոսական աշխատանքով օգնում էին ռազմաճակատին:

Այսպիսով, Հայրենական մեծ պատերազմին ակտիվորեն մասնակցեցին հայ ժողովրդի ավելի քան 600 հազար զավակներ: Նրանցից 200 հազարը զոհվեց հայրենիքի պաշտպանության և ֆաշիզմի ջախջախման մարտերում: Պատերազմին մասնակցած 106 հոգու շնորհվեց հայրենիքի բարձրագույն պարգևը՝ Խորհրդային Միության հերոսի կոչում, իսկ 27 մարտիկներ դարձան Փառքի շքանշանի լրիվ ասպետներ: Խորհրդային բանակի կազմում 83 հոգի դարձան գեներալներ, իսկ 5-ը՝ Հ. Բագրամյանը, Հ. Իսակովը, Հ. Բաբաջանյանը, Ս. Խուդյակովը, Ս. Ագանովը՝ մարշալներ: Հայ ժողովրդի զավակներն աչքի ընկան նաև թիկունքում: Մտավորականները, բանվորներն ու գյուղացիները իրենց դժվարին և քրտնաջան աշխատանքով մեծապես նպաստեցին հաղթանակի ապահովմանը:

УЧАСТИЕ АРМЯНСКОГО НАРОДА В ВЕЛИКОЙ ОТЕЧЕСТВЕННОЙ ВОЙНЕ

ГОАР ХАЧАТРЯН

Резюме

Армянский народ внес весомый вклад в дело разгрома фашизма. В войне приняли участие около 600 тысяч армян, из которых 200 тысяч погибли в боях. Сыновья армянского народа состояли в рядах всех войсковых и партизанских соединений, сражались на всех фронтах. В Великой Отечественной войне приняли активное участие шесть армянских национальных дивизий. 89-я армянская Таманская дивизия была единственной национальной дивизией, принявшей участие в боях за взятие Берлина. Ста шести армянам, участвовавшим в войне, была присвоена высшая награда Родины – звание Героя Советского Союза. 27 участников войны стали кавалерами Ордена Славы. Среди армян, состоявших в рядах Советской Армии, 83 достигли высокого звания генерала, а пятерым было присвоено звание маршала. В разгром фашизма большую лепту внесли также армяне диаспоры. Они приняли участие в войне не только в рядах армий союзников, но и в тылу. Своим бескорыстным трудом интеллигенция, рабочие и крестьяне Советской Армении также внесли свой вклад в общую победу над врагом.

PARTICIPATION OF THE ARMENIAN PEOPLE IN THE GREAT PATRIOTIC WAR

GOHAR KHACHATRYAN

Summary

The Armenian people made its weighty contribution to the rout of the fascism. About 600 thousand Armenians took part in the war. 200 thousands were killed in the battles. The sons of the Armenian people served in all troops and partisan detachments, fought at all fronts. Six Armenian national divisions took an active part in the Great Patriotic war. The 89th Armenian Tamanian division was the only national division which took part in the battles for taking of Berlin. 106 Armenians, participants of the war were given the highest reward of Motherland – the title of Hero of the Soviet Union. 27 participants of the war became the holders of Order of Glory. 83 Armenians serving in the Soviet Army reached the rank of General and five were conferred the rank of Marshal. The Armenians of Diaspora also made their great contribution to the rout of the fascism. They took part in the war not only in the armies of the Allies but in the rear units as well. The intelligentsia, workers and peasants of Soviet Armenia also contributed to the achievement of the Victory by their disinterested work.